



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

«04» հուլիսի 2018 թվականի N: 160-Կ ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ
ԶՐԱՀԵՂՁՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «բ», «դ» և «զ» կետերի դրույթներով՝ 2018 թվականի ամառային ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերը կանխարգելելու և բնակչության պաշտպանությունն ապահովելու նպատակով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Հանձնարարել.

- 1) Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի թվով 6՝ Մանթաշի, Թավշուտի, Արփիի, Կառնուտի, Սառնաղբյուրի և Վարդաքարի ջրամբարների պատասխանատուներին.
 - ա. ամառային ժամանակահատվածում մարզի ջրամբարների տարածքներում սահմանել ուժեղացված շուրջօրյա հերթապահություն,
 - բ. ջրամբարներին հարակից տարածքներում մշտապես իրականացնել սանիտարական գոտու պահպանության համար նախատեսված միջոցառումներ,
 - գ. արգելել անսարք կամ ինքնաշեն լողամիջոցներով ջրամբարների ջրային տարածք մուտք գործելը.

2) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղի տնօրենին՝

ամառային ժամանակահատվածում մարզի ջրային ավազանների սանիտարական վիճակի նկատմամբ սահմանել խիստ հսկողություն.

3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գործող զանգվածային լրատվամիջոցներով ազգաբնակչությանը պարբերաբար տեղեկացնել ջրային տարածքներում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներին մոտ գտնվող համայնքների ղեկավարներին (համաձայն հավելվածի)՝

1) համայնքի տարածքում կամ համայնքին մոտ գտնվող ջրային տարածքներում տեղադրել համապատասխան նախազգուշացնող ցուցատախտակներ.

2) համայնքի ուժերով սահմանել հսկողություն ջրային տարածքներում.

3) ջրահեղձման դեպքերի կանխարգելման նպատակով հանգստի վայրերում՝ հովելների շրջանում իրականացնել բացատրական աշխատանքներ:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Արա Մելիքջանյանին:

Կ.ՍԱՐՈՒԻՆԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է



ՑԱՆԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ
(ԶՐԱՄԲԱՐՆԵՐ, ԼՃԵՐ) ՄՈՏ ԳՏՆԿՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ**

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Զրային տարածքի անվանումը	
1.	Գյումրի	Գյումրի	Քաղաքային լողավազաններ, շատրվաններ, ջրավազաններ	
2.	Ազատան	Ազատան	Ազատանի լիճ	
3.	Մարմաշեն	Զաջուռ	Զաջուռի սելավակարգավորիչ ջրամբար	
4.	Ախուրյան	Կրաշեն	Կրաշենի լճակ	
5.	Ախուրիկ	Ախուրիկ	Ախուրյանի ջրամբար (Ախուրիկի լճակ)	
6.	Բայանդուր	Բայանդուր	Ախուրյանի ջրամբար	
7.	Գետք	Գետք	Ախուրյանի ջրամբար	
8.	Երազգավորս	Երազգավորս	Ախուրյանի ջրամբար	
9.	Ախուրյան	Կառնուտ	Կառնուտի ջրամբար	
10.		Հովիտ	Կառնուտի ջրամբար	
11.		Բասեն	Կառնուտի ջրամբար	
12.	Մարմաշեն	Մարմաշեն	Մարմաշենի լճակ	
13.		Վահրամաբերդ	Վահրամաբերդի լճակ	
14.	Անի	Մարալիկ	Մարալիկի ջրամբար	
15.		Ձորակապ	Մարալիկի ջրամբար	
16.		Քարաբերդ	Գյուղամիջյան լճակ	
17.		Աղին	Ախուրյանի ջրամբար	
18.		Իսահակյան	Ախուրյանի ջրամբար	
19.		Լուսաղբյուր	Ախուրյանի ջրամբար	
20.		Շիրակավան	Ախուրյանի ջրամբար	
21.		Ջրափի	Ախուրյանի ջրամբար	
22.		Սառնաղբյուր	Սառնաղբյուրի ջրամբար	
23.		Արփի	Չարիշատ, Երիզակ	Արփի լճի ջրամբար
24.			Բերդաշեն, Պաղակն	Արփի լճի ջրամբար
25.	Գառնատիճ, Եղնաջուր		Արփի լճի ջրամբար	
26.	Ձորակերտ, Դարիկ		Արփի լճի ջրամբար	
27.	Ծաղկուտ, Լորասար		Արփի լճի ջրամբար	
28.	Շաղիկ		Արփի լճի ջրամբար	

29.	Աշոցք	Բավրա	Թավշուտի ջրամբար
30.		Թավշուտ	Թավշուտի ջրամբար
31.		Սիգավետ	Թավշուտի ջրամբար
32.	Սարապատ	Ձորաշեն	Ձորաշենի լճակ
33.		Սարապատ	Ձորաշենի լճակ
34.	Փոքր Մանթաշ	Փոքր Մանթաշ	Արիեստական լճակ
35.	Վարդաքար	Վարդաքար	Վարդաքարի ջրամբար
36.	Հովտաշեն	Հովտաշեն	Վարդաքարի ջրամբար
37.	Հոռոմ	Հոռոմ	Վարդաքարի ջրամբար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Տ. ՂԱՐԻԲՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

